

ՀԱՅ ԿԵԱՆՔ

Վերջին օրերի քաղաքական համաձայնութիւնները թւում է, թէ բոլորովին յեղաշրջելու են Հայկական հարցի լուծման ուղղութիւնը: Յայտնի է, որ Անգլիան և Թուրքիան համաձայնութեան եկան մի քանի խնդիրների նկատմամբ և Անգլիան մի շարք զիջումներ կորդելով Թուրքիայից փոխադարձօրէն երաշխաւոր եղաւ Ասիական Թուրքիայի անձեռմխելիութեան համար մինչև 40 տարի: Անգլիան իւր ազդեցութիւնն ուժեղացնում է Ասիական Թուրքիայի հարաւում, Գերմանիան գործունէութեան լայն ապարէզ է ձեռք բերում Փոքր Ասիայում, Բաղդատի երկաթուղու երկարութեամբ, և որպէս զի միւս պետութիւններն էլ հանգիստ մնան—Ֆրանսիային ազատութիւն է տրւում գործելու և իւր «կուլտուրական» գործը շարունակելու Պաղեստինում և մանաւանդ Ասորիքում, իսկ Ռուսաստանը ազդեցութեան շրջան է ստանում Թուրքիայի արևելեան սահմաններում: Այս է ահա ընդհանուր գծերով այն համաձայնութիւնը, որ կապուել է Անգլիայի և Գերմանիայի միջև:

Եւրոպական քաղաքականութեան ինքնին շատ պերճախօս մի փաստ: Յայտնի է, որ Եւրոպական քաղաքական աշխարհը արդէն երկու տասնամեակ է ենթակայ է գերմանական ու անգլիական հակամարտութեան և չի կատարւում քաղաքական քիչ թէ շատ յայտնի ոչ մի երևոյթ, որ զօրեղապէս շաղկուէր այդ ուժերին հակամարտութիւնից: Անգլիան, որ աշխարհի բոլոր մասերում շահեր ունի ու իւր գոյութեան, իւր փառքի ու անուան համար պարտական է պահել ու պաշտպանել այդ շահերը—ոչ միայն ներկայ մոմենտի համար, այլ և այն վիճակին է, որ պէտք է նախատեսել աշխատի տասնեակ ու աւելի տարիների յե-

տեւում թագնուած հնարաւոր վտանգները, այդ համատա-
րած Անգլիան բնականօրէն պիտի ամրացնի իւր դիրքերը
Գերմանիայի դիմաց, որ Բաղդատի երկաթուղու հետ
Թիւրքիա է մտցնում իւր ազդեցութիւնը, որին կարող է
հետեւել նաեւ տիրապետութիւնը Գերմանական առաջխա-
ղացմանը մի պատուար դնելու համար Անգլիան արդէն
յաջողցրել է Բաղդատի երկաթուղու հարաւային ծայրն իւր
ձեռքն առնել և այդպիսով այդ երկաթուղուց նրա ամ-
բողջ քաղաքական նշանակութիւնը մերկացնել: Բայց Գեր-
մանիան էլ այնուամենայնիւ գոհ կարող է լինել, որովհետեւ
այժմ նա հաստատ տէր է դառնում այդ գծին, որ ձգուելով
Փոքր Ասիայի արեւմտեան ափերից անցնում է այդ ըն-
դարձակ երկրով ու հասնում մինչև Բաղդատ ու աւելի
հարաւ: Այդպիսով երկու մեծ պետութիւններն ստացան
իրանց բաժինները—առ ժամանակ գոհ են և խաղաղու-
թիւն են ցանկանում, որպէս զի խաղաղութեան մէջ կա-
րողանան իրանց նոր ձեռք բերած նուաճումները օգտա-
գործել:

Այդ բոլորից յետոյ բնական է, որ Ասիական Թիւր-
քիայի այս կամ այն մասի ռեֆորմի խնդիրը յիշեալ հա-
մաձայնութիւնից յետոյ նոր թափով պիտի հանդէս գար:
Ոչ Անգլիայի և ոչ էլ Գերմանիայի համար այժմ ձեռնադու-
շէ, որ Թիւրքիայի մէջ խռովութիւններ լինեն: Հայկական
ու արաբական, ասորական կամ քրդական հարցերը պէտք
է որքան կարելի է շուտ իրենց՝ թէկուզ ժամանակաւոր
լուծումն ստանան: Հակառակ դէպքում քաղաքական բար-
դութիւններ կարող են ծագել և Անգլիայի ու Գերմանիայի
խաղաղ ճանապարհով ձեռք բերած նուաճումները ի չիք
կը դառնան: «Հայաստանը պէտք է շուտով բարեկարգել»—
այս են պահանջում այժմ Անգլիայի ու Գերմանիայի դիպ-
լոմատներն ու պետական գործիչները: Եւ շուարած հայը
մի բոպէ վարանած կարող է հարց տալ. թէ ինչ պատա-
հեցաւ, արդեօք հայը ինչ նոր գերազոյն յատկութիւններ
բաց արեց Եւրոպայի առաջ, որ նրա համար այդքան հապ-
ճեպով ու այդքան թափով ռեֆորմ են պահանջում: Սա-

կայն դրա գաղտնիքները շատ պարզ են։ Թէ Գերմանիան և թէ Անգլիան երկիւղ են կրում, որ և թէ Հայաստանում շարունակուի նոյն իրաւադրկութիւնն ու անարդարութիւնը, երբ հայը դարձեալ յափշտակուի, կողոպուտի և սպանումի ենթարկուի քրդի ու թուրքի կողմից, հարևան մեծ պետութիւնը—Ռուսաստանը կարող է վերջապէս միջամտել և այն ժամանակ յամենայն դէպս գերմանական և անգլիական ախորժակները ուղեն չուղեն պէտք է սահմանափակուեն։ Այդ հանգամանքն է ահա, Ռուսաստանի հնարաւոր միջամտութիւնը, որից պաշտպանւում են Եւրոպայի պետութիւնները և նոր թափով հրապարակ են նետում Ասիական Թիւրքիայի, յատկապէս Հայաստանի բարեկարգութեան խնդիրը։

Հայաստանը պիտի բարեկարգուի անգլիացիների ու գերմանացիների հսկողութեան տակ։ Այս է Հայկական հարցի վերջին փուլը։ Մենք մի քանի անգամ այս թերթի էջերից առիթ ենք ունեցել արտայայտուելու, թէ Եւրոպական հսկողութիւնը Հայկական հարցի բաղմակողմանի, արագ և տեղն ու տեղը լուծման տեսակէտից ցանկալի չէ։ Այսօր էլ մնում ենք նոյն կարծիքին և առիթից օգտուելով աւում ենք, որ թէ պատմական, թէ այժմեական և թէ Հայոց ազգի ապագայի տեսակէտից Հայոց հարցով պարապողների, այդ խնդրով պառպաղ անդա անողների գլխաւոր ջանքերը պէտք է լինին այն, որ քարոզեն, տարածեն, թէ միակ հնարաւոր, բանաւոր ու հիմնական միջոցը Հայկական հարցի լուծման՝ կամ Ռուսաստանի երևումն է Ասիական Թիւրքիայում և կամ ռուսական զօրեղ հսկողութեան տակ ռեֆորմների ներմուծումը։ Մօտիկ ու մշտական հսկողութեան փաստը կարող է միայն ռեֆորմի տեսականութիւնը երաշխաւորել։ Մամուլի մէջ չերևացին վերոյիշեալ քաղաքական համաձայնութեան մանրամասնութիւնները, մինչև օրս էլ պարզ չէ, թէ Ռուսաստանն այդ համաձայնութեամբ իրօք ինչ է ձեռք բերում և նրա ազդեցութիւնն ինչ ընթացք է ստանալու։ Սակայն երբ մարդ կարդում է Թիւրքիայից եկած նամակներն ու նկարագրութիւնը, այնտեղի

տեղական ազգաբնակչութեան՝ հայերի, նոյնիսկ թուրքերի ցանկութիւնը— օր առաջ տեսնել ռուսներին գործի գլուխ անցած ու ռեֆորմի գործն ամբողջապէս իրենց ձեռքն առած— ջերմ կերպով ցանկանում է, Ռուսաստանը գոնէ այս անգամ յարմարագոյն մոմենտը ձեռքից բաց չթողնէ և իւր պատմական մեծ միսսիային հաստատ քայլերով ընդառաջ գնայ:

Սակայն հետաքրքիր է թէ ինքը թուրք կառավարութիւնը ինչպէս է վերաբերում սպասուող բարենորոգչութիւններին: Թուրք կառավարութիւնը— ինչքան հեզանք ու ծաղր կայ այդ երկու բառերի մէջ: Այդ կառավարութիւնն եղել է աւերի, թալանի, սպանութեան, անարդարութեան անընդհատ մի շարան և կոպիտ կերպով սրբագործել է այդ կեանքը: Այսօր, 20-րդ դարում ոչինչ չի փոխուել և այսօր թուրքից ու թուրք կառավարութիւնից մենք ոչ թէ ռեֆորմներ ենք սպասում, այլ սարսափով ու արհաւիրքով կուշ եկած նոր թալանների, նոր աւերների ուրուականն ենք երեւակայում: Պօլսի Հայոց Արշարունի պատրիարքը մօտ օրերս Թուրք կառավարութեան մի նոր թակրիթ է տուել, որ նախկիններից աւելի կտրուկ և վճռական ձևերով Օսմանեան կառավարութեան առաջ մի աւելորդ անգամ բաց է անում Հայաստանի պատկերը, մի պատկեր, որ լի է յուսահատութեամբ, անլուր տառապանքով ու կուտակուած վշտով: Աւ թուրք կառավարութիւնը խոստանում է այդ ամենքին վերջ դնել ու կարգը վերահաստատել: Բայց կարգը վերահաստատել— Թուրքիայի համար նշանակում է աւերն ու սպանութիւնը, թալանն ու կողուպուտը թողնել, որ շարունակուեն, որովհետեւ դարեր շարունակ Թուրքիայի մէջ ուրիշ հասարակակարգ չի եղել, ուրիշ արդարութիւն չէ լսուել: Եւ կարգը վերահաստատւում է ու թալանն ու աւերը անվերջ շարունակւում:

Իրաւազրկութեան, ապօրինութեան և անարդարու-

թեան փաստերն այնքան շատ են, որ անհնարին է թէ-
կուզ ամենաարտայայտիչներն այստեղ համախմբել: Այս ան-
գամ բաւականանում ենք մի երկու թարմ գէպքեր յիշա-
տակելով: «Հորիզոնի» (№ 115) Էրզրումի թղթակիցը մի
քանի կէտով բնորոշում է այն թուրք ժանդարմներին,
որոնք Էրզրումի վրայով գնում էին Վան և Բիթլիս: Հայաս-
տանը բարեկարգելու: Այդ ժանդարմները Օսմանեան մայ-
րաքաղաքից էին գալիս, ըստ երևոյթին կրթուած ու բա-
րեկիրթ: Ապա թղթակիցը գրում է. «քաղաքիս ոստիկան-
ներից ոմանք, որոնց թւում է մի հայ, լսելով եւրոպական
թիւրքիայից եկած կրթուած ժանդարմների գալը, գնում
են նրանց այցելութեան: Արտագին խօսակցութեան միջո-
ցին հայ ոստիկանը գրպանից հանում է ժամացոյցը և սե-
ղանին դնում: Հիւրանոցից դուրս գալով, նա յիշում է,
որ ժամացոյցը մոռացել է սեղանի վրայ, յետ է դառնում,
սակայն... ժամացոյցն արդէն անհետացած է լինում ու
դատարկաձեռն հեռանում: Մի ուրիշ, աւելի աղաղակող
փաստ ևս նոյն բարեկարգիչների կեանքից. իջևանելով
Փաստրմաճեանի խանում և մի քանի օր մնալով մեկնում
են, չվճարելով մօտ 150 զրուշ: Երբ հիւրանոցատէրը գան-
դատւում է այդ մասին ոստիկանապետին՝ վերջինս պատաս-
խանում է. «է՛հ, ինչ անենք, խեղճ մարդիկ են»: Ահա այս
խեղճ մարդիկն են, աւելացնում է թղթակիցը, որ գնում
են Վան և Բիթլիս՝ հայ կեղեքւող ժողովրդին քրդերի
դէմ պաշտպանելու համար... Ահա նմուշը այն մարդ-
կանց, որոնցով սկսւում է Հայաստանի բարեկարգութիւ-
նը: Դժբախտաբար այդ բարեկարգութիւնը նոր բան չէ
ու մեզ հայերիս քաջ յայանի:

Թէ ինչքան սին ու դատարկ են թիւրք կառավարու-
թեան խօսատումները ռեֆորմների վերաբերեալ, թէ ինչ-
պէս անպատկառ կերպով ծաղրում է թուրքը հայի իրա-
ւունքն ու ազատութիւնը, այդ երևան է գալիս ցայտուն
կերպով Դիարբեքիւրի վերջին գէպքերի առթիւ, որի մա-
սին մեզ պատմում է Русское Слово-ի Պօլսի թղթակիցը
(№ 118): Դիարբեքիւրի վիլայեթում նիզիքին բերդաքա-

դաքի մօտ մի քանի հայ գիւղեր կան: Բերդը ունի 600 քուրդ ձիաւոր զօրք—համիդիէ, որպէս բերդապահ: Զօրքին հայ մատակարարողը մի հայ էր, հարուստ վաճառական, որը սակայն հակառակ իր հետապնդումներին, երկար ժամանակ է փող չէր ստանում զօրքից: Վերջը, պաշտօնական շրջանների տեղեկութիւնների ասելով, այդ հայը զօրքին տալիք հացը թունաւորում է և փախչում ապաստան գտնում: Սարերում թէև այդ թոյնից ոչ ոք չի մեռնում, սակայն կիսավայրենի թուրքերը վճռում են հայի այդ առասպելական յանցանքը խստօրէն պատժել: Մի կիւրակի օր քուրդ հրոսակախումբը Հայոց եկեղեցու բակն է թափւում, ապա ներս խուժում աղօթողներով լի եկեղեցին և անգթօրէն սկսում հրացանի կոթերով, սւիճներով և դաշոյններով ծեծել բոլորովին անմեղ խաղաղ գիւղացիներին, որոնք սարսափած ու ահաբեկ—գերմարդկային ճիգերով փրկիչի էին ման գալիս: ու այդ վայրկեանին շատերը խելագարւում են... Դրան հետևում է տների կողոպուտը, կանանց և տղաների բռնաբարումը, մի քանի հայ գիւղերի իսպառ աւերումը:

Ու այս ամենը կատարւում է այն ժամանակ, երբ նոյն պետութիւնը «բարեկիրթ» ժանդարմներ է ուղարկում Հայաստանը բարեկարգելու: Մենք տեսանք արդէն այդ ժանդարմների դործունէութեան և ինստիտուցիաների ուղղութիւնը: Այդ փաստերի շարքը կուգէինք փակել մի օրինակով, որ առաջ է բերում «Pour les peuples d'orient» երկշարածածերթը (№ 7), որի մէջ ցայտուն գծերով բնորոշւում են թիւրքիայում գոյութիւն ունեցող կարգերը:

Խօսքն Օսմանեան արդարադատութեան մասին է, և մի թուրք հրապարակախօս է, Ահմեդ Ռասիմ անունով, որ սպանիչ երգիծանքով և լի հուժարով մի փոքրիկ պատմութեան մէջ խայտառակում է այդ արդարադատութիւնը: Այդ պատմութեանը անեկդոտի բոլոր յատկութիւններն ունի, բայց դժբախտաբար մի իրական պատմութիւն է:

Աղանայի կողմերից մի գիւղացի քաղաք է գնում ոստիկանութեան գլխաւորին գանգատուելու մի փոքրիկ

բռնակալի դէմ, որը ամբողջ շրջանը սարսափի մէջ էր սլա-
հում, խայտառակում, անպատուում և ծեծում էր խեղճ
գիւղացիներին: Գլխաւորը լսելով գիւղացու գանգատը—
ասում է նրան.

— Շատ լաւ. ես այդ թշուառականին անմիջապէս սլա-
ծել կըտամ. ես նրան դատարան կըյանձնեմ:

Այս ասելով, նա վերցնում է գրիչը և դատաւորին
հրահանգ է գրում. բայց երբ մի փոքր յետոյ նա իւր շուրջն
է նայում, տեսնում է, որ գիւղացին այդտեղ չէ, անյայ-
տացել է. . . Հէնց որ սա «դատարան», «դատաւոր» խօս-
քերը լսում է, ինչքան ուժ ունի, փախչում հեռանում է
իւր գիւղը:

Այդ խեղճ ողորմելին — ասում է Ա. Ռասիմը, փախ-
չում է չէ թէ ժանտախտից, այլ մեր երկրի արդարա-
դատութիւնից: Զարհուրեցուցիչ բան է դա: Ադանայի այդ
խեղճ ողորմելու փախուստը ամենապայծառ կերպով բնո-
րոշում է այն զգուելի անիշխանութիւնը, որ տիրում է
Օսմանեան երկրի մէջ: Թուրքի արդարադատութիւնը սար-
սափեցնում է գիւղացուն, որովհետեւ սա հաստատ գիտի,
որ կորցնելով իւր փողն ու ժամանակը դատաւարաւորած է
շարունակ միայն անարդարութիւն տեսնելու: Յանցանքը
միշտ համարեա անպատիժ է մնում և յանցաւորը աւելի
անգթութեամբ շարունակում է շարշարել ու տանջել նրանց,
որոնք կը համարձակուեն գանգատուել:

Եւ մարդիկ փախչում են Օսմանեան արդարադատու-
թիւնից, ինչպէս փախչում են ժանտախտից. . .

Այս ու սրանց նման հազարաւոր փաստերը մի աւե-
լորդ անգամ գալիս են մեզ ասելու, որ ոչ մի երկիր և ոչ
մի նահանգ թուրքերի միջոցով չի կարող բարեկարգուել:
Ամիսներ առաջ մենք ասել ենք, որ արեւելքում քրդերի ու
թուրքերի թալանը, աւերն ու կողոպուտը, սպանութիւնն
ու կոտորածը երբէք չէ փոխուել և այսօր ոչ մի նշան չկայ,
որ մեզ ասի, թէ երբ և իցէ այդ ցեղերը կըթողնեն ուրիշի
հաշւով ապրելը և կանցնեն խաղաղ աշխատանքի ուղիներ-
ը: Ոչ թէ թուրք պաշտօնեայի անհատական չկամութիւնն

է, որ արդելք է հանդիսացել երկրի բարեկարգութեան, բարեշինութեան, այլ աւելի խոր, աւելի անտեսանելի պատճառներ են դեր խաղացել այդտեղ, Ուրախ ենք, որ այդ տեսակէտը այսօր հանդէս է գալիս նաև «Հորիզոնի» մէջ (№ 114), որը իւր առաջնորդող յօդուածում ռեֆորմների անյաջողութիւնը անհատական չկամութեամբ բացատրելու հարցի վերաբերմամբ հետեւեալն է գրում. «Սակայն մեզ թւում է, որ այստեղ անհատական ցանկութիւններից ու չկամութիւններից աւելի խոր մի բան կայ, որ պէտք է հրապարակ հանել, որպէս զի ռեֆորմների խնդրում ընդմիշտ պարզորոշութիւն հաստատուի»։ Ապա նոյն յօդուածի վերջում գաղտնիքը հետեւեալ կերպով է բացում... «Այդ երևոյթների իսկական բացատրութիւնը պէտք է որոնել այն սոցիալ-քաղաքական պայմանների մէջ, որոնց տակ ապրել է Տաճկաստանը անցեալ դարի ընթացքում և ապրում է ներկայումս»։ Մեզ թւում է սակայն, որ այդ երևոյթների մեծագոյն և տիրապետող պատճառը թուրքերը հանդիպեցին ոչ թէ Տաճկաստանում անցեալ դարի ընթացքում, այլ դարեր առաջ իրենց հետ բերին Միջին Ասիայի բարձրաւանդակից։ Ամենամեծ չափով այդտեղ դեր է խաղում առասայի խնդիրը, թուրք ցեղի առասայական ինստիտուտները, որոնք այդքան զօրեղ են և ամեն տեսակի սոցիալ-քաղաքական պայմանների մէջ նոյնորակութեամբ հանդէս են գալիս, քանակական աննշան տարբերութիւններով լոկ և իրենց հերթին պայմանաւորում են ամեն կարգի սոցիալական-քաղաքական պայմանները։ Յանձին թուրք ցեղի մենք կանգնած ենք ժողովուրդների դիմաց, որոնք մինչև օրս թշնամի են եղել կուլտուրայի, այսօր էլ թշնամի են, ժողովուրդներ, որոնք բնաւ չեն թողնելու իրենց նախակուլտուրական զօրեղ բնազդները և կամ շատ հեռու ապագայում միայն թերևս մերկանան իրենց բարձրասիական հակումներից։ Այս կարծիքները ապրիորի խորհրդածութիւններ և վերացական բանավարութիւններ չեն, այլ դժբախտաբար գրութիւններ, որոնք հանուած են թուրք ցեղերի պատմութեան ուշիմ ու բազմակողմանի ուսում-

նասիրութիւնից: Հայաստանի ռեֆորմների բախտը և հայ ազգի մի մասի ճակատագիրը Թիւրքիայի հետ տեւականօրէն կապել ցանկացողները այդ հանգամանքն հաշուի պէտք է առնեն:

Մեր տեսակէտը, որով Թուրքերի պատմական բոլոր անյաջողութիւնները և ներկայ կեանքի բովանդակ քայքայումը նրանց ցեղական նկարագրի ու կրօնական մոլեւանդութեան հետեւանք են գլխաւորապէս—ինչ խօսք, որ եւրոպայում կարող է համակրանք չգտնել: Եւրոպացին, որ շատ անգամ Թուրքի միայն անունն է լսել և նրա մասին կարգացել միմիայն, անշուշտ աւելի բարձր, բայն և ազատամիտ կարծիքի է, որովհետեւ չի դատաւարտուած նրա հարեանութիւնը վայելել: Ամեն բանի մեղաւորը կառավարութիւնն է. կառավարութիւնը երբ ուղենայ, կարող է այնպէս անել, որ քրիստոնեաները իրենց դրախտում զգան Օսմանեան կայսրութեան մէջ. նա կարող է հալածանքն ու աւերը, կողոպուտն ու ապօրինութիւնը դադարեցնել և եւրոպական հասարակակարգը իրականութիւն դարձնել Թիւրքիայում: միայն թէ ցանկանայ:

Այս սխալ տեսակեցից է մեկնում Բերլինի Reichsbote թերթում նորերումս լոյս տեսած մի ընդարձակ յօդուածը, որից քաղուածքներ են արել կիսապաշտօնական Poccia-ն և ռուսական միւս թերթերը: Գերմանացի յօդուածագիրը կարծում է, թէ սխալ է հայերին վաշխառու և խաբերայ անուանել. յատկութիւններ, որոնց պատճառով էլ իբր թէ Թուրքերը կոտորում են հայերին: Այդ տեսակէտը սխալ է և հնացած. հայերը իրենց ձեռքն են կենտրոնացրել Թիւրքիայի առեւտուրը, այդ ճիշտ է. սակայն այդ տեղի ունի գլխաւորապէս մեծ քաղաքներում կամ ծովափնեայ վայրերում. իսկ այդ տեղերում կոտորածներ չեն լինում: Թիւրքիայի կոտորածները մեծ մասամբ տեղի են ունենում երկրի ներսում աղքատ ժողովրդի մէջ—միմիայն և միմիայն կառավարութեան դրդմամբ և մոլլաների աջակցութեամբ, և եթէ կառավարութիւնը ցանկանայ դադարեցնել—կարող է. կամքն է, որ այստեղ պակասում է և ոչ

կարողութիւնը։ — Այս է ահա գերմանացի յօգուածագրի
կարծիքը։ Եւ գերմանացին այն է, որ նա գլխի չի ընկնում,
թէ ինչպէս է, որ գարերի երկար շարքի միջով մեզ ոչ մի
լուսաւոր աստղ չի փայլում՝ այն բռնութիւնների, բարբա-
րութեան, հալածանքների, կոտորածի, աւերի ու կողո-
պուտի խաւարից, որի անունն է Թիւրքիայի և Թուրքերի
պատմութիւն։ այդ ցեղը երբէք չկամեցաւ բարեկարգել,
նա երբէք չղղաց սոհանջը ազնիւ տենչով բռնուելու —
լաւ ասրելու, մարդավայել կեանքի համար աշխատելու,
իւր և իւր հպատակ ցեղերի հոգեւոր ու մտքւոր կեանքի
համար հաստատուն հիմունքներ ստեղծելու։ Նա երբէք
չուղեց իւր կարողութիւնն արտայայտել։ — Ինչ խօսք, որ
որեւէ ցեղի կամքն ու կարողութիւնը շատ աւելի խոր,
անըմբռնելի, անտեսանելի պատճառներ ունին, քան թէ այդ
կարելի է կարծել առաջին հայեացքից։ Բարեկարգուելու,
նոր կուշտութեամբ կեանքով ապրելու ցանկութիւնն ու
կարողութիւնը պակասում է Թիւրքիային և նա, վաղ թէ
ուշ — Թերեւս մօտիկ ապագայում ցեղական և տեղական
պայմանների համաձայն իւր բնական տարրերին վերած-
ուի, մի հանգամանք, որ ինչքան էլ դուք չկայ Եւրոպայի
և յատկապէս Գերմանիայի դիպլոմատներին, բայց բարե-
բախտաբար նրանց կամքից չի կարող մշտապէս կախուած
մնալ։ Թիւրքիային վիճակուած է բնական ճանապարհով
տարրալուծուել և Թերեւս մինչև այն ժամանակ — ի դժ-
բախտութեան մեր, Հայոց հարցին վիճակուած է պահել
իւր այժմէութիւնն ու սրութիւնը։

Գ. Ալբունեան

